

Քիւ 26786
Փետրուար 25, 1980

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Գաղասեան
Հովիւ Ս. Աստուածածին Սկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք Փետրուար 15, 1980 թուակիր ձեր անդեկագիրը, որով կը
հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 27ին գումարուած համայն-
քիղ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի Ինք անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամնե-
րը, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր
դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի
պայծառութիւն Ս. Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

ճորճ Գարո
Ալվրթ Զամպերմեան
Զարլզ Ասանաջեան
Զարլզ Նահապետեան
Հայկ Զօթեան

Թիւ 27610
Յունուար 21, 1982

Հոգեշնորհ
Տ. Արշէն վրդ. Այվազեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Չէլթըն Կամ.

Սիրելի Հայր Արշէն,

Ստացած ենք Յունուար 16, 1982 թուակիր ձեր նամակը եւ ներկայեալ
Սուլզան Լի Սթարրի ամուսնալուծման պաշտօնագրի օրինակը:

Այսու զիրով կ'աբաւենենք որ օրհնէք ամուսնութիւնը Հէրրի Սազըր-
եանի եւ Սուլզան Լի Սթարրի՝ Կամաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ կա-
նոնաց:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՅԻՄԱՌԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 28104
Փետրուար 28, 1988

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Վ. Վրդ. Գաղասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Լիզինկոթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Սաացած ենք անդեկագիրները համայնքիդ Ժիական ժողովին, որ ձեր նախագահութեամբ զուարուած է Յունուար 20, 1988ին:

Այսու գիրով կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ժիական Խորհուրդի նոր կազմը եւ ձեզի ու ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող ու արդիւնաւոր գործունէութեան սարի մը՝ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ռիչըրտ Գառիշիանեան
Լեւոն Արիեան
Լօրէնյ Գաբրս
Սիրայէլ Չերքեզեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՍ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28519

Մարտ 7, 1984

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք Փետր. 6, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունվ. 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ք հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ճորճ Պարտ
Հարրի Թուֆայեան
Հրանդ Ճամճեան
Գէորգ Չիլէլի
Արթըր Սարգիսեան



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28746

Սեպտեմբեր 7, 1984

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ժ. Վրդ. Պաղտասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Նկատի ունենալով որ Հայ Ժողովուրդին վիճակուած ցեղասպանութեան 70-ամեակն է յաջորդ տարի, պաշտօնապէս `1985-Ը Մեծ Եղեռնի ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏԱՐԻ` կը յայտարարենք:

Այս որոշումը տրուած է գլխաւորաբար վայել յարգանքը մատուցանելու համար մեր բիւրաւոր նահատակներուն` որոնք իրենց կեանքը զոհեցին որպէս զի Հայ Ժողովուրդը ապրի պատուով եւ ծակատաքաց, եւ նոյն ատեն յատուկ ձեռնարկներով ու ոգեկոչման հանդիսութիւններով փառաբանելու համար բազմաչարչար Հայ Ժողովուրդի հրաշալի վերածնունդը:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ առնուած որոշումին համաձայն` մեր փափաքն է որ մեր համայնքները, քոյր յարանուանութիւնները, ինչպէս նաեւ մշակութային, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններն ու կազմակերպութիւնները բերեն իրենց մասնակցութիւնը այն ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱՒՈՒՄԲԻՆ, որ որոշուած է կազմել:

Այս գրութեամբ հրաւեր կ'ուղղենք ձեզի եւ կը խնդրենք որ բարեհաճիք համայնքիդ կողմէ մէկ ներկայացուցիչ մը ղրկել առաջին խորհրդակցական հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի Սեպտեմբեր 25, երեկոյեան ժամը 7.30ին, Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Բարի եղէք ձեր ներկայացուցիչին անունը տեղեկացնել Առաջնորդարանի տնօրէն Տիար Մեսրոպ Գերմեանին` հեռաձայնելով Առաջնորդարանի գրասենեակը, մինչեւ Սեպտ.20,1984:

Մեր նահատակներուն բարի յիշատակը յարգելով` անգամ մը եւս մենք ուխտած կ'ըլլանք հաւատարիմ մնալ մեր պատմութեան, հաւատքին, ժողովուրդին եւ Մայր Հայրենիքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻԿՍՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28781

Սեպտեմբեր 7, 1984

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Նկատի ունենալով որ Հայ Ժողովուրդին վիճակուած ցեղասպանութեան 70-ամեակն է յաջորդ տարի, պաշտօնապէս ` 1985-Ը Մեծ Եղեռնի ՆԱՀԱՏԱԿԱՅ ՏԱՐԻ` կը յայտարարենք:

Այս որոշումը տրուած է գլխաւորաբար վայել յարգանքը մատուցանելու համար մեր բիւրաւոր նահատակներուն` որոնք իրենց կեանքը զոհեցին որպէս զի Հայ Ժողովուրդը ապրի պատուով եւ ճակատաբաց, եւ նոյն ատեն յատուկ ձեռնարկներով ու ոգեկոչման հանդիսութիւններով փառաբանելու համար բազմաշարժար Հայ Ժողովուրդի հրաշալի վերածնունդը:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ առնուած որոշումին համաձայն` մեր փափաքն է որ մեր համայնքները, քոյր յարանուանութիւնները, ինչպէս նաեւ մշակութային, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններն ու կազմակերպութիւնները բերեն իրենց մասնակցութիւնը այն ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ, որ որոշուած է կազմել:

Այս գրութեամբ հրաւեր կ'ուղղենք ձեզի որ բարեհաճիք մասնակցիլ առաջին Խորհրդակցական հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի Սեպտեմբեր 25, Երեկոյեան ժամը 7.30ին, Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Մեր նահատակներուն բարի յիշատակը յարգելով` անգամ մը եւս մենք ուխտած կ'ըլլանք հաւատարիմ մնալ մեր պատմութեան, հաւատքին, ժողովուրդին եւ Մայր Հայրենիքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Հոկտեմբեր 22, 1985

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ժ. Վրդ. Պարսամբան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Շնորհակալ պիտի ըլլամ եթէ մինչեւ նոյեմբեր 15, 1985, բարե-
հաճիք Առաջնորդարան ղրկել համայնքիդ Հայ Դպրոցի եւ Կիրակնօրեայ
Վարժարանի աշակերտներուն անուններն ու հասցէները:

Փափաքելի է որ այս անուններն ու հասցէները ունենանք Առաջ-
նորդարանի թղթածրարներուն մէջ:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամբան

Խաժակ Վրդ. Պարսամբան
Առաջնորդի Փոխանորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29213
Փետրուար 25, 1986

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք Փետրուար 19, 1986 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 26ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հարրի Թուֆայեան
Ռոզ Գաֆաֆեան
Արթըր Սարգիսեան
Հրանդ Ճամճեան
Գէորգ Չիլէլի



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29907

Օգոստոս 19, 1986

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ժ. Վրդ. Պաղտասեան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք ձեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով ձեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



ԱՐՄԵՆԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԿՐԱՆԻ ԲՆԻՄԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՆ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30120
Փետրուար 17, 1987

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ ծ. վրդ. Պաղտասևան
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Լիվինկսթրն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք փետրուար 5, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ փետրուար 1ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

ԼԵՆՈՆ ԱՐԻԵԱՆ
Չարլզ Առաքելեան
Լուիզ Նագաշեան
Կլէն Տալաքեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30363
Մարտ 3, 1988

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտատեան
Հովի Ս. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Լիվինկսթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք Փետրուար 10, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 7ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ռիչըրտ Պատիշխանեան
Գեորգ Չիլէլի
Ռօզ Բաֆաֆեան
Վիքթորիա Ծամճեան
Արթըր Սարգիսեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30975
Հոկտեմբեր 17, 1989

Նորին Սուրբ Օծութին
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Լիվինակթըն Նի Ճըրզիի Ս. Աստուածածին Եկեղեցոյ Հոգևոր Հովիւր, Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտատեան, եւ Ծխական Խորհուրդը կը տեղեկացնենք թէ 1989 Դեկտեմբեր 3-ին պիտի նշեն համայնքի Արարատեան Հայ Դպրոցի 60-ամեակը:

Այս առթիւ կը խնդրուի Ձերդ Սրբութենէն որպէս զի բարի ըլլաք Օրհնութեան Գիր մը շնորհել Ս. Աստուածածին Եկեղեցոյ՝ առ ի գնահատութիւն Արարտեան Հայ Դպրոցի վաթսուն տարինէրու ընթացքին մատուցած ծառայութեան եւ հայեցի կրթութեան ի նպաստ կատարած նուիրական աշխատանքին: Հայ Դպրոցը կը շարունակէ իր հայապահպանման ազնի գործը:

Մեծապէս շնորհակալ պիտի ըլլանք եթէ բարեհաճիք ընթացք տալ ներկայացուած խնդրանքին:

Ձերդ Սրբութեան կը մաղթենք առաւել քաջառողջ եւ արեւջատ կեանք:

Մատչելով ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30741
Մարտ 8, 1989

Հոգեշնորհ
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան
Հովի Ա. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Լվինկաթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Ստացած ենք Մարտ 6, 1989 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 15-ին գումարած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուեարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Զարլզ Առաքելեան
Զարլզ Պերի
Ռոյ Ստեփանեան
Լուիզ Նազաշեան